Համառոտ նկարագիր

1. Քաջարան քաղաքում, Վ. Տերյան 6 հասցեում, թիվ 2 մանկապարտեզի շենքի կառուցում

Ծրագրի նպատակն է ապահովել համայնքի բոլոր երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրացումը:

Ներկայումս համայնքում գործում է երկու մանկապարտեզ՝ մեկը Քաջարան քաղաքում, մյուսը՝ Լեռնաձոր գյուղում: Քաջարան քաղաքում սուբվենցիոն ծրագրի շրջանակում կառուցվում է ևս մեկ մանկապարտեզ, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականի սեպտեմբերին: Երեք մանկապարտեզների ընդհանուր հզորությունը կկազմի 240 տեղ:

Ներկայումս 120 երեխա հերթագրված է մանկապարտեզ ընդունվելու համար, սակայն տեղերի սակավության պատճառով նրանք չեն կարողանում օգտվել իրենց կրթության իրավունքից: Նոր մանկապարտեզի կառուցմամբ համայնքի այս առաջնահերթ խնդիրը կլուծվի:

Նախագծվող հողամասում նախկինում նույնպես գործել է մանկապարտեզ, որը սեյսմիկ ուսումնասիրության եզրակացության հիման վրա, որպես շահագործման համար ոչ անվտանգ շենք, հիմնովին ապամոնտաժվել է՝ նոր շենք կառուցելու նպատակով:

2. Քաջարան քաղաքի կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցում (ք. Քաջարան, Գետափնյա 8)

Քաջարանի կոյուղաջրերի մաքրման գործող կայանը կառուցվել է 1960-ական թվականներին և այսօր, ֆիզիկական ու բարոյական զգալի մաշվածության պատճառով, այլևս չի ապահովում կոյուղաջրերի արդյունավետ մաքրում:

Նախատեսվում է նոր, ժամանակակից և փակ տիպի մաքրման կայանի կառուցում նախկին կայանի տարածքում, որտեղ մաքրման ամբողջ գործընթացը կիրականացվի փակ միջավայրում՝ ապահովելով բարձր արդյունավետություն և նվազագույն ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

Կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայանի կառուցումը կարևոր նշանակություն ունի քաղաքի կայուն զարգացման, շրջակա միջավայրի

պահպանության և բնակչության բարեկեցության համար: Այն կնպաստի բնապահպանական վիճակի բարելավմանը, ջրային ռեսուրսների պահպանությանը և ավելի անվտանգ ու բարենպաստ կենսապայմանների ապահովմանը:

3. Համայնքի բնակավայրերի փողոցների նորոգում

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ ճանապարհահատվածների նորոգումը.

1. Ձագիկավան գյուղի 1-ին և 2-րդ թաղամասերի փողոցներ,
2. Մ2 – Վերին Հանդ եկեղեցի ճանապարհահատված,
3. Քաջարան քաղաքի Ե. Չարենցի, Խ. Աբովյանի, Գետափնյա և Գայի փողոցներ, ինչպես նաև Քաջարան քաղաքի գերեզմանոց տանող ճանապարհ (ընդհանուր՝ 1750 գծամետր):

Ծրագրի շրջանակում նախատեսվում է.

- մաշված և վնասված ճանապարհահատվածների վերականգնում,
- նոր ասֆալտբետոնե ծածկույթի տեղադրում,
- ճանապարհային անվտանգության ապահովման միջոցառումների իրականացում:

Ծրագրի իրականացումը նպատակ ունի բարձրացնել բնակչության տեղաշարժի անվտանգությունն ու հարմարավետությունը, բարելավել համայնքային ենթակառուցվածքները և խթանել համայնքի բնակավայրերի համաչափ զարգացումը: